


ՀՀ բյուջետային ծախսերի արդյունավետության գնահատման հիմնախնդիրներ

Չափանյան Թագուհի Ս.
ասպիրանտ, Կառավարման ամբիոն,
Հայաստանի Հանրապետության պետական կառավարման սկզբնական (Երևան, ՀՀ)
 <https://orcid.org/0009-0007-9759-6558>
taguhichapanyan@gmail.com

ՀՏԳ՝ 336.5; EDN: VBSQLL; JEL: H54, H55, H61, E60, E65, E66

DOI: 10.58587/18292437-2026.1-216

Հանգուցաբառեր և բառակապակցություններ՝ բյուջետային ծախս, արդյունավետության գնահատման համաթիվ, ծրագրային բյուջետավորում, բազմազործոն ռեզրեսիս, վեկտորական ավտոռեգրեսիոն մոդել

Проблемы оценки эффективности бюджетных расходов РА

Чапаян Тагуи С.
аспирант, Кафедра управления,
Академия государственного управления Республики Армения (Ереван, РА)

Аннотация. Повышение эффективности бюджетных расходов в Республике Армения в последние годы стало одним из ключевых направлений реформ государственного управления. В условиях ограниченных финансовых ресурсов особенно важно оценивать не только объем государственных расходов, но и их эффективность и макроэкономическое воздействие. В данном контексте программное бюджетирование рассматривается как инструмент, позволяющий увязать бюджетные расходы с четко определёнными целями и ожидаемыми результатами.

Целью статьи является оценка влияния бюджетных расходов Республики Армения на ВВП с использованием эконометрического моделирования, а также – оценка эффективности бюджетных мероприятий Республики Армения на основе расчёта индекса.

В рамках статьи был разработан индекс оценки эффективности бюджетных программ и мероприятий, который отражает соотношение между выполнением показателей результатов и продукции, установленных для этих программ и мероприятий, и выполнением расходов. Указанный индекс позволяет количественно оценить, насколько бюджетные расходы превращаются в целевые результаты.

Одновременно с помощью моделей векторной авторегрессии и многомерной регрессии была оценена влияние государственных бюджетных расходов Республики Армения, а также основных статей бюджета по экономической классификации – капитальных и текущих расходов – на ВВП. Кроме того, проанализировано влияние некоторых статей государственного бюджета Республики Армения по функциональной классификации на отдельные компоненты ВВП, в частности: влияние расходов, направленных на экономические отношения, на экспорт; влияние расходов на социальную защиту – на конечное потребление; и влияние расходов на оборону – валовое накопление (инвестиции).

Ключевые слова и словосочетания: бюджетные расходы, индекс оценки эффективности, программное бюджетирование, многомерная регрессия, векторная авторегрессионная модель

Problems of assessing the efficiency of RA budget expenditures

Chapanyan Taguhi S.
PhD student, Chair of Administration,
Public Administration Academy of the Republic of Armenia (Yerevan, RA)

Abstract. The improvement of the efficiency of budgetary expenditures in the Republic of Armenia has become one of the key areas of public administration reforms in recent years. In conditions of limited financial resources, it is particularly important to assess not only the volume of government spending, but also its efficiency and macroeconomic impact. In this context, program-based budgeting is considered a tool that makes it possible to link budgetary expenditures with clearly defined objectives and expected outcomes.

The aim of the article is to assess the impact of the Republic of Armenia's budgetary expenditures on GDP using econometric modeling and to evaluate the efficiency of Armenia's budgetary measures through the calculation of an index.

Within the framework of the study, a composite index for assessing the efficiency of budgetary programs and measures has been developed, which reflects the ratio between the performance of outcome and output indicators established for these programs and measures, and the performance of expenditures. This index allows for a quantitative assessment of the extent to which budgetary expenditures are transformed into targeted results.

At the same time, using vector autoregression (VAR) and multifactor regression models, the impact of expenditures of the RA state budget, as well as the main items of the economic classification of the budget - capital and current expenditures - on GDP was estimated. In addition, the impact of certain functional classification items of the Republic of Armenia's state budget on specific components of GDP was analyzed, in particular: the effect of expenditures directed toward economic relations on exports, the effect of social protection expenditures on final consumption, and the effect of defense expenditures on gross accumulation (investment).

Keywords & phrases: budget expenditure, efficiency assessment index, program budgeting, multiple regression, vector autoregressive model

Ներածություն

ՀՀ բյուջետային ծախսերի արդյունավետության բարձրացումը վերջին տարիներին դարձել է պետական կառավարման բարեփոխումների առանցքային ուղղություններից մեկը: Սահմանափակ ֆինանսական ռեսուրսների պայմաններում հանրային ծախսերի ոչ միայն ծավալների, այլև դրանց արդյունավետության և մակրոտնտեսական ազդեցության գնահատումը ձեռք է բերում առանձնահատուկ կարևորություն: Այս համատեքստում ծրագրային բյուջետավորումը դիտարկվում է որպես այն գործիքը, որը հնարավորություն է տալիս կապել բյուջետային ծախսերը հստակ ձևակերպված նպատակների և ակնկալվող արդյունքների հետ:

Հոդվածի նպատակն է տնտեսաչափական մոդելավորմամբ գնահատել ՀՀ բյուջետային ծախսերի ազդեցությունը ՀՆԱ-ի վրա, ինչպես նաև համաթվի հաշվարկմամբ գնահատել ՀՀ բյուջետային միջոցառումների արդյունավետությունը:

Հոդվածի շրջանակում մշակվել է բյուջետային ծրագրերի և միջոցառումների արդյունավետության գնահատման համաթիվ, որն արտացոլում է այդ ծրագրերի և միջոցառումների համար համապատասխանաբար սահմանված վերջնարդյունքի և արդյունքի ցուցանիշների կատարողականի և ծախսերի կատարողականի հարաբերակցությունը: Նշված համաթիվը հնարավորություն է տալիս քանակապես գնահատել, թե որքանով են բյուջետային ծախսերը վերածվում նպատակադրված արդյունքներին:

Միաժամանակ, վեկտորական ավտոռեգրեսիայի և բազմագործոն ռեգրեսիայի մոդելների միջոցով գնահատվել են ՀՀ պետական բյուջետային ծախսերի, ինչպես նաև բյուջեի տնտեսագիտական դասակարգման հիմնական հոդվածների՝ կապիտալ և ընթացիկ ծախսերի ազդեցությունը ՀՆԱ-ի վրա: Բացի այդ, վերլուծվել է ՀՀ պետական բյուջեի գործառական դասակարգման որոշ հոդվածների ազդեցությունը ՀՆԱ առանձին բաղադրիչների վրա, մասնավորապես՝ տնտեսական հարաբերություններին ուղղվող ծախսերի ազդեցությունը արտահանման վրա, սոցիալական պաշտպանության ծախսերի ազդեցությունը՝ վերջնական սպառման և պաշտպանության ծախսերի ազդեցությունը՝ համախառն կուտակման վրա:

Մեթոդաբանական մոտեցում

Հետազոտության շրջանակում բյուջետային ծախսերի և տնտեսական աճի փոխազդեցությունը գնահատելու նպատակով կառուցել ենք վեկտորական ավտոռեգրեսիայի (VAR) մոդել: VAR մոդելի էնդոգեն փոփոխականներն են ՀՀ պետական բյուջեի ծախսերը և իրական համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ), իսկ էկզոգեն փոփոխականներն են պետական բյուջեի եկամուտները և պետական պարտքը: Մոդելը բավարարում է տնտեսաչափական մոդելավորման պայմաններին, ըստ այդմ, մինիմում AIC, ինչպես նաև տարբեր լազերով գնահատված մոդելների որակական ցուցանիշների համեմատության հիման վրա ընտրվել է լավագույնը՝ 8 լազով VAR մոդելը, որը բավարարում է կայունության պայմանին: Մոդելի մնացորդները հոմոսկեդաստիկ են և չունեն ավտոկոռելյացիա:

Իսկ կապիտալ և ընթացիկ ծախսերի, ինչպես նաև գործառական դասակարգման որոշ հոդվածների ազդեցությունը բացահայտելու նպատակով կառուցել ենք բազմագործոն ռեգրեսիայի մոդելներ, որոնք ևս ենթարկվել են ստանդարտ տնտեսաչափական թեստերի. հաստատվել է մնացորդների հոմոսկեդաստիկությունը և անկախությունը, բացակայում է բազմակոլիներարությունը ($VIF < 5$), իսկ Ռ-ամսեյի թեստի արդյունքները վկայում են, որ մոդելների սպեցիֆիկացիան ճիշտ է: Ըստ այդմ, բազմագործոն ռեգրեսիայի մոդելներով գնահատված B պարամետրերը BLUE գնահատականներ են:

Սույն հետազոտության շրջանակում, բացի էկոնոմետրիկ վերլուծությունից, մշակվել է նաև «բյուջետային ծախսերի արդյունավետության գնահատման համաթիվ»: Այն հիմնված է հետևյալ երկու ցուցանիշների վրա՝

- ծրագրի (միջոցառման) արդյունքի կատարողական (ծրագրի դեպքում՝ վերջնարդյունքի ցուցանիշ, իսկ միջոցառման դեպքում՝ արդյունքի ցուցանիշ),
- ծրագրի (միջոցառման) ծախսերի կատարողական:

Այդ ցուցանիշների հարաբերակցությունը ցույց է տալիս ծրագրի (միջոցառման) արդյունավետության մակարդակը:

Համաթիվն ունի հետևյալ տեսքը.

$$E_i = \frac{O_{\text{փաստացի}} / O_{\text{պլանավորված}}}{S_{\text{փաստացի}} / S_{\text{պլանավորված}}}$$

որտեղ՝

- E_i -ն ծրագրի կամ միջոցառման արդյունավետության համաթիվն է,
 - $O_{\text{փաստացի}}$ -ն ծրագրի (միջոցառման) փաստացի արդյունքն է (վերջնարդյունքի կամ արդյունքի փաստացի ցուցանիշ),
 - $O_{\text{պլանավորված}}$ – ծրագրի (միջոցառման) պլանավորված արդյունքն է (վերջնարդյունքի կամ արդյունքի պլանավորված ցուցանիշ),
 - $S_{\text{փաստացի}}$ – ծրագրի (միջոցառման) փաստացի ծախսն է,
 - $S_{\text{պլանավորված}}$ – ծրագրի (միջոցառման) պլանավորված ծախսն է:
- Եթե ծրագիրը կամ միջոցառումն ունեն մի քանի արդյունքային (վերջնարդյունքի) ցուցա-

նիշ, ապա նախ՝ հաշվարկվում է դրանց կատարողականների միջինը, այնուհետև՝ վերջինս հարաբերվում է նույն ծրագրի կամ միջոցառման ֆինանսական կատարողականի հետ:

Ստացված արդյունքների համաձայն, ծրագրերը նպատակահարմար է դասակարգել ըստ արդյունավետության մակարդակի՝ զգալի բարձր, բարձր, բավարար, ցածր և անարդյունավետ: Համաթվի մակարդակները և դրանց բնութագրերը ներկայացված են Աղյուսակ 1-ում: Առաջարկվող համաթվի հաշվարկը հնարավորություն կտա արագ գնահատել ՀՀ պետական բյուջեի ծախսերի կատարման արդյունավետությունը, մինչդեռ խորքային գնահատումները, որոնք ապահովում են վերլուծության բարձր խորություն այնուամենայնիվ պահանջում են զգալի ժամանակային ռեսուրսներ:

Աղյուսակ 1. Բյուջետային ծրագրերի և միջոցառումների արդյունավետության համաթվի մակարդակները և դրանց բնութագրերը

Համաթվի մակարդակ	Արդյունավետության մակարդակ	Բնութագիր
$E \geq 1.5$	Զգալի բարձր արդյունավետություն	Ծրագրի (միջոցառման) արդյունքների կատարողականը շատ բարձր է ծախսերի կատարողականից, սակայն, այս արդյունքը կարող է նաև վկայել պլանավորման առանձնահատկությունների մասին
$1 < E < 1.5$	Բարձր արդյունավետություն	Ծրագրի (միջոցառման) արդյունքների կատարողականը գերազանցում է ծախսերի կատարողականին
$0.8 \leq E \leq 1$	Բավարար արդյունավետություն	Ծրագրի (միջոցառման) արդյունքների կատարողականը մոտ է կամ հավասար ծախսերի կատարողականին
$0.6 \leq E < 0.8$	Ցածր արդյունավետություն	Ծրագրի (միջոցառման) արդյունքների կատարողականը զիջում է ծախսերի կատարողականին
$E < 0.6$	Անարդյունավետ	Ծրագրի (միջոցառման) ծախսերի կատարողականը էապես գերազանցում է արդյունքների կատարողականին

Գրականության ակնարկ

Ծրագրային բյուջետավորումը (այսուհետ՝ ԾԲ) ուղղված է բյուջետային գործընթացի էական վերափոխմանը՝ պետական միջոցների հատկացումը կապելով հստակ սահմանված արդյունքների և կատարողական ցուցանիշների հետ, որի հիմնական մարտահրավերներից է համարվում արդյունավետության չափումը: Ըստ Ռոբինսոնի, ծրագրային բյուջետավորումը հնարավորություն է տալիս հիմնական շեշտը դնել առաջնահերթությունների ձևավորման և բաշխման արդյունավետության վրա, քանի որ

կառավարությունները միշտ չէ, որ լավ են ծախսերի առաջնահերթությունների սահմանման հարցում՝ նոր կամ ծախսային ավելացումների դեպքում գործելով ավելի լավ, քան ցածր առաջնահերթության կամ անարդյունավետ ծախսերի բացահայտման և կրճատման հարցում [5, էջ 18]: Ծրագրային բյուջետավորման բազմակողմանի ազդեցության վերաբերյալ Ռոբինսոնը շեշտում է, որ թեև կատարողական բյուջետավորման «հիմնական» նպատակը հանդիսանում է պետական ծախսերի արդյունավետ բաշխումը և արտադրողական արդյունավետությունը, սակայն, կա նաև կարևոր կապ կատարողականի վրա հիմնված բյուջետավորման և մակրոմակարդակի նպատակների միջև [6, էջ 13]: Միևնույն ժամանակ, ուսումնասիրությունները հաստատում են, որ կատարողական բյուջետավորումը, պատշաճ կերպով ներդրվելու դեպքում, կարող է ծառայել որպես հզոր մեխանիզմ հանրային հատվածում հաշվետվողակա-

¹ Ծանուցում. աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից: Գնահատման սանդղակները ձևավորվել են բյուջետային միջոցառումների համար իրականացված հաշվարկների արդյունքների հիման վրա: Օրինակ՝ $0.8 \leq E \leq 1$ միջակայքը համարվում է բավարար, քանի որ հաշվարկները ցույց են տալիս՝ բյուջետային միջոցառումների փաստացի կատարողականների զգալի մասը գտնվել է 1-ից ցածր մակարդակում:

նության և արդյունավետության բարձրացման, ինչպես նաև հանրային ծառայությունների մատուցման բարելավման խթանման համար: Էմպիրիկ վերլուծությունների արդյունքները ցույց են տալիս, որ կատարողական բյուջետավորում ներդրած գործակալությունները վիճակագրորեն նշանակալի ձևով նվազեցրել են ինչպես պլանավորված և փաստացի բյուջետային ցուցանիշների միջև շեղումները, այնպես էլ միավոր ծառայության արժեքը [9, էջ 56]: Ընդ որում, ծրագրային բյուջետավորումը կարևոր ազդեցություն ունի ոլորտային զարգացման վրա, օրինակ՝ ԱՄՆ-ի պաշտպանության նախարարության կողմից ռեսուրսների բաշխման հարցում ծրագրային բյուջետավորման կատարողականի ազդեցության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գերատեսչության ներսում ծրագրային մակարդակով կատարողականի վերաբերյալ տեղեկատվությունը դրական ազդեցություն ունի պաշտպանական ռեսուրսների բաշխման վրա [7, էջ 151]: Միաժամանակ, ծախ-

սերի բարձր արդյունավետությունը նպաստում է դրանց մակրոտնտեսական դրական ազդեցությանը, ըստ Դիմիտրիոսի, ռազմական ոլորտի ծախսերի արդյունավետության բարձր մակարդակը կարող է մեղմել կամ վերացնել ռազմական բեռի բացասական ազդեցությունը տնտեսական աճի վրա [8, էջ 1]:

Վերլուծություն

Վերջերս լայն կիրառություն է ստացել ծախսերի ծրագրային դասակարգումը, այն կատարողական բյուջետավորման տարատեսակներից է: ԾԲ-ն բյուջետավորման եղանակ է, որի ժամանակ բյուջետային գործընթացը հիմնվում է բյուջեի շրջանակում իրականացվող ծրագրերի վրա: 2019 թվականից ՀՀ պետական բյուջեն կազմվում է ծրագրային ձևաչափով, ըստ այդմ, պետական բյուջեով նախատեսվել և իրականացվում են ոլորտային ծրագրեր, որոնք էլ բաղկացած են միջոցառումներից: Ծրագրերի և միջոցառումների քանակական տվյալները և դրանց շարժընթացը տես Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. ՀՀ բյուջետային ծրագրերի և միջոցառումների քանակի փոփոխությունը 2019-2022 թթ.

	2019	2020	2021	2022	2023	2024
Ծրագիր	205	182	178	175	176	171
Միջոցառում	1146	1000	965	977	1035	984

Աղբյուրը. Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով 2019-2024 թթ. ՀՀ պետական բյուջեի կատարման մասին հաշվետվությունները:


Ծրագրերի և միջոցառումների քանակի փոփոխությունը 2019-2024 թթ. պայմանավորված է այդ դասակարգումների անընդհատ վերանայումներով, միջոցառումների խմբավորումներով և տարանջատումներով:

Գծապատկեր 1-ում ներկայացված են բյուջետային ծրագրերի և միջոցառումների բաշխվածքն ըստ ճյուղային նախարարությունների, ինչից երևում է, որ նախարարությունների կողմից իրականացվող ծրագրերի և միջոցառումների քանակն ու ֆինանսավորման չափը խիստ անհամաչափ են: Օրինակ՝ իրականացվող ծրագրերի քանակով առաջատար է Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը՝ 23 ծրագիր և 240 միջոցառում, սակայն ֆինանսավորման ծավալով համեմատաբար միջին դիրքերում է՝ 285.6 մլրդ ՀՀ դրամ, ինչը պայմանավորված է ոլորտի բազմազանությամբ:

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը իրականացնում է 21 ծրագիր և 146 միջոցառում, սակայն,

ֆինանսավորման ծավալով հանդիսանում է առաջատար ոլորտներից մեկը՝ 274.5 մլրդ ՀՀ դրամ: Սա պայմանավորված է ծրագրերի հիմնականում կապիտալ բնույթով, որոնք պահանջում են զգալի ֆինանսական ռեսուրսներ: Մինչդեռ, պաշտպանության նախարարությունը իրականացնում է 5 ծրագիր՝ 16 միջոցառում, թեև ֆինանսավորման ծավալը զգալի բարձր է՝ 549.4 մլրդ ՀՀ դրամ, ինչը բնորոշ է կապիտալատար և տեխնիկապես բարդ ոլորտներին:

Ընդհանուր առմամբ, նախարարությունների միջև ծրագրերի քանակի և ֆինանսավորման ծավալների տարբերությունները մատնանշում են պետական բյուջեի կառուցվածքային անհամաչափությունները, և ցույց տալիս, որ ծրագրային բյուջետավորումը դեռևս ամբողջությամբ չի ապահովում ռեսուրսների բաշխման արդյունքահեն տրամաբանությունը, ինչն ուժեղացնում է ծրագրերի արդյունավետության գնահատման գործիքների կիրառման անհրաժեշտությունը:



Գծապատկեր 1. ՀՀ 2024 թ. նյութային նախարարությունների կողմից իրականացվող ծրագրերի թիվը և ֆինանսավորման ծավալները

Աղբյուրը. Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով ՀՀ պետական բյուջեի 2024 թվականի կատարման մասին հաշվետվությունները:

ՀՀ բյուջետային ծրագրերի գծով պլանավորված և փաստացի ծախսերի կատարողականի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ

այս ցուցանիշների միջև առկա են էական խզումներ (տես՝ Աղյուսակ 3):

Աղյուսակ 3. 2024 թ. ՀՀ պետական բյուջեի ծրագրերի ֆինանսական կատարողականը

Կատարողականը պլանի նկատմամբ		
115%<	70<=x<=115	<70%
17	121	25

Աղբյուրը. Աղյուսակի տվյալները հաշվարկվել են հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով ՀՀ պետական բյուջեի 2024 թվականի կատարման մասին հաշվետվությունները:

Ծրագրերի ֆինանսական կատարողականը շատ բարձր տատանողականություն ունի՝ շուրջ 17 ծրագրերի կատարողականը գերազանցում է 115%, ընդ որում կան ծրագրեր, որոնց կատարողականը գերազանցում է պլանը 3-4 անգամ, և շուրջ 25 ծրագրերի կատարողականը փոքր է 70%-ից, ընդ որում, կան ծրագրեր որոնց կատարողականը կազմում է ընդամենը 5%:

ՀՀ-ում ծրագրային բյուջետավորման արդյունավետ իրականացման հիմնական խոչընդոտներից մեկն էլ պայմանավորված է այն հանգամանքով, որ իրականացվող բարեփոխումները հիմնականում կրում են գերատեսչական, այլ ոչ թե ծրագրային բնույթ: Արդյունքում, պետական կառավարման մարմինները պարտադիր կերպով ներկայացնում են որոշակի ծրագրեր [3], սակայն այդ ծրագրերի բովանդակային կառուցվածքը հաճախ չի համապատասխանում ծրագրային բյուջետավորման տրամաբանությանը, մասնավորապես դրանք շարունակում են հեռու մնալ այն պատճառահետևանքային շղթայից, որը ենթադրում է

ներդրումների, արդյունքների, վերջնարդյունքների և ազդեցությունների (input–output–outcome–impact) փոխկապակցվածություն: Այս բացը դրսևորվում է ինչպես ծրագրերի կառուցվածքային ձևավորման, այնպես էլ դրանց արդյունքային չափորոշիչների համակարգում: Արդյունքում, չափորոշիչները հաճախ արտացոլում են ոչ թե քաղաքականության իրական արդյունավետությունը կամ սոցիալ-տնտեսական ազդեցությունը, այլ վարչական գործունեության ծավալները՝ ձևականորեն ներկայացնելով կատարողականի չափումը: Այսպես օրինակ՝ արդարադատության ոլորտի ծրագրերի և միջոցառումների ուսումնասիրություններ փաստում են, որ սակավաթիվ են ծրագրերի իրականացման արդյունավետությունն արտացոլող որակական բնույթի արդյունքների չափորոշիչները, կամ արդյունքների քանակական չափորոշիչները ոչ ինֆորմատիվ և ոչ կանխատեսելի են տվյալ միջոցառման նկարագրության համար [10, էջ 8]: Այսինքն՝ վերջնական արդյունքի չափորոշիչները լավ չեն

նկարագրում բյուջետային ծրագրի նպատակը և չեն կարող արդյունավետ կերպով կիրառվել այդ նպատակները չափելու համար [4, էջ 26]: Իսկ ըստ Դալեի, դրանք երբեմն ընդհանրապես բացակայում են՝ ինչ մասին է փաստում ՀՀ առողջապահական որոշ ծրագրերի ուսումնասիրությունը [11, էջ 15]:

Արդյունքի չափորոշիչների թիրախային և փաստացի ցուցանիշների միջև հաճախ արձանագրվում են շեղումներ, որոնք կարող են դրսևորվել ինչպես գերակատարման, այնպես էլ թերակատարման ձևով, ինչը որոշակիորեն պայմանավորված է պլանավորման փուլում ոչ բավարար վերլուծությունների իրականացմամբ [12, էջ 369]: Օրինակ՝ «1022-Գյուղատնտեսության խթանման ծրագիր» ծրագրի «12005-Գերմանիայի զարգացման վարկերի բանկի (KfW) հետ համատեղ գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացման համար պետական աջակցություն» միջոցառման համար որպես արդյունքի չափորոշիչ սահմանվել է «Ապահովագրվող տարածքներ, հեկտար», որը տարեկան պլանի համեմատությամբ թերակատարվել է շուրջ 60 անգամ (պլանավորվել է 15000 հա, փաստացի կատարվել է 247 հա) [2]:


Բյուջետային ծրագրերի և միջոցառումների ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշերի ցածր կատարողականը ևս մեկ անգամ շեշտադրում է ծրագրերի գնահատման համակարգի ներդրման կարևորությունը և այդ նպատակով 2024 թվականին բյուջետային համակարգի մասին ՀՀ օրենքում ամրագրվել է բյուջետային ծրագրերի գնահատման պահանջ [1]: Մակայն, հաշվի առնելով պետական բյուջեում ներառված ծրագրերի ու միջոցառումների մեծ քանակը, ակնհայտ է, որ բոլոր ծրագրերի խորքային գնահատումը կպահանջի զգալի ժամանակ, մասնագիտական ներուժ և ֆինանսական ռեսուրսներ: Այս պայմաններում բյուջետային ծախսերի արդյունավետության գնահատման համաթիվը հնարավորություն կտա իրականացնել ծրագրերի արագ գնահատում՝ առանց վարչարարական լրացուցիչ ծանրաբեռնվածության: Ըստ այդմ, բյուջետային միջոցառումների համար հաշվարկված արդյունավետության համաթիվը ցույց է տալիս, որ որոշ դեպքերում նախարարությունների կողմից իրականացվող ընդհանուր միջոցառումների մինչև 10%-ն՝ անարդյունավետ են, բավարար և բարձր արդյունավետություն ունեն իրականացվող միջոցառումների կեսից ավելին, միաժամանակ, բավականին բարձր մասնաբաժին ունեն նաև այն միջոցառումները,

որոնք զգալի բարձր արդյունավետության մակարդակում են, ինչը կարող է պայմանավորված լինել արդյունքների պլանավորման ընթացքում համեմատաբար ցածր նշաձողի սահմանմամբ: ՀՀ ութ նախարարությունների կողմից 2024 թվականին իրականացված միջոցառումների արդյունավետության համաթիվի հաշվարկները ներկայացված են Գծապատկեր 2-ում:

Ընդ որում, պետք է նկատի ունենալ, որ սույն համաթիվի հաշվարկման մեթոդի արդյունավետությունն անմիջականորեն կախված է տվյալների որակից, որոշ ծրագրերի և միջոցառումների, օրինակ՝ վարչականի դեպքում, առկա չեն արդյունքային չափորոշիչներ կամ երբեմն այդ չափորոշիչները ոչ լիարժեք են արտացոլում ծրագրի նպատակը, այս դեպքերում պետք է կիրառել գնահատման այլ մեթոդներ:

Ծրագրերի գնահատման համաթիվը ցույց է տալիս իրականացվող միջոցառումների համար սահմանված նպատակների կատարման աստիճանը, մինչ դեռ հաճախ վերլուծություններում կարևորվում է նաև այդ ծախսերի մակրոտնտեսական հետևանքները, որոնք չեն հանդիսանում այդ ծախսերի առաջնային նպատակ, սակայն անուղակիորեն կարող են հանգեցնել ոչ միայն ոլորտային զարգացման, այլև ընդհանուր մակրոտնտեսական ցուցանիշների բարելավման:

Ըստ այդմ, գնահատվել են բյուջետային ծախսերի և տնտեսական աճի փոխազդեցությունները, որի համաձայն 1 տոկոս տնտեսական աճը 4 եռամսյակ հետո նպաստում է բյուջեի ընդհանուր ծախսերի աճին 0,31 տոկոսով, 5 եռամսյակ հետո՝ 0,35 տոկոսով, 6 եռամսյակ հետո՝ 0,34 տոկոսով և 7 եռամսյակ հետո՝ 0,43 տոկոսով՝ նշանակալիության 1 և 5 տոկոս մակարդակներում, իսկ բյուջետային ծախսերի ազդեցությունը տնտեսական աճի վրա նշանակալի չէ: Մոդելի արդյունքերը նաև ցույց են տալիս նաև, որ ընթացիկ եռամսյակում բյուջեի եկամուտների 1 տոկոս աճը նպաստում է տնտեսական աճին 0,19 տոկոսով, մինչդեռ ընթացիկ եռամսյակում պետական պարտքի 1 տոկոս աճը տնտեսական աճը ճնշում է 0,46 տոկոսով: Եկամուտների 1 տոկոս աճը նպաստում է ընթացիկ եռամսյակում պետական ծախսերի 0,19 տոկոս աճին՝ նշանակալիության 10 տոկոս մակարդակով: Այսպիսով մոդելի արդյունքները վկայում են, որ տնտեսական աճի խթանման գործում պետության ծախսային քաղաքականությունն ունի փոքր դերակատարություն:



Գծապատկեր 2. ՀՀ նյութային նախարարությունների կողմից իրականացվող բյուջետային միջոցառումների բաշխումը ըստ արդյունավետության համայնքի, %, 2024 թ.

Ծանուցում. գծապատկերի արդյունավետության մակարդակի տոկոսը ցույց է տալիս տվյալ նախարարության կողմից իրականացվող միջոցառումների մեջ տվյալ մակարդակն զբաղեցնող միջոցառումների մասնաբաժինը:

Իսկ բյուջետային ծախսերի տնտեսագիտական հոդվածների ազդեցության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նշանակալիության 5% մակարդակում կապիտալ ծախսերի 1 մլրդ. ՀՀ դրամ աճը 6 եռամսյակ հետո անվանական ՀՆԱ-ն ավելացնում է 0.04 տոկոսով: Կապիտալ ծախսերի համեմատաբար թույլ ազդեցությունը վկայում է, որ թեև ենթակառուցվածքային և ներդրումային ծախսերը երկարաժամկետում նպաստում են տնտեսական արդյունքի ձևավորմանը, սակայն, դրանց կարճաժամկետ և միջնաժամկետ ազդեցությունը ավելի փոքր է: Կապիտալ ծախսերի փոքր ազդեցության պատճառներից է դրանց փոքր մասնաբաժինը ՀՆԱ-ում՝ մոտ 3.5%, երկարաժամկետ բնույթը, կառուցվածքը, ֆինանսավորման աղբյուրները (պետական պարտք), որոնք կարող են հանգեցնել «մեղմման» էֆեկտի: Կապիտալ ծախսերի տնտեսական ազդեցության չափը էապես պայմանավորված է դրանց կառուցվածքային առանձնահատկություններով, սակայն անկախ դրանց կարճաժամկետ մակրոտնտեսական հետևանքներից՝ այդ ծախսերը նպատակահարմար է իրականացնել այն ոլորտներում, որտեղ առկա են նշանակալի կառուցվածքային բացեր: Այս առումով, ըստ Գրիգորյանի և Արպանահիի. «ներկայումս Հայաստանը պետք է կենտրոնանա տրանսպորտային համակարգի և ենթակառուցվածքների շարունակական արդիականացման, համակարգի կառավարման գործընթացի բարելավման և տրանսպորտային ենթակառուցվածքներում նոր ներդրումների իրականացման վրա» [13, էջ 127]:

Իսկ ընթացիկ ծախսերի ազդեցության ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ նշանակալիության 5% մակարդակում ընթացիկ ծախսերի 1% աճը 2 եռամսյակ հետո տնտես-

ական աճը ավելացնում է 0.107 տոկոսով, ինչը բացատրվում է այս ծախսերի պահանջարկային ազդեցությամբ՝ կարճաժամկետում ձևավորում է հավելյալ ազդեցացված պահանջարկ, որն արտահայտվում է սպառման և ծառայությունների ծավալների աճով:

Հաշվի առնելով, որ հաճախ տնտեսական աճի և ծախսային հոդվածի միջև ընդհանուր ազդեցությունը այլ ազդակների ֆոնին «կորչում է», փորձ ենք կատարել բացահայտել տնտեսական աճի գործոնների և բյուջետային ծախսերի առանձին հոդվածների միջև կապը:

Ըստ այդմ, գնահատվել են պաշտպանության ոլորտում կատարվող ծախսերի ազդեցությունը համախառն մասնավոր կուտակման վրա, սոցիալական պաշտպանության ծախսերի ազդեցությունը վերջնական սպառման վրա և տնտեսական հարաբերություններին ուղղվող ծախսերի ազդեցությունը արտահանման վրա:

Պաշտպանական ոլորտի ծախսերը սովորաբար դիտվում են որպես ոչ արտադրողական, սակայն որոշ երկրներում դրանք հանդես են գալիս որպես ներդրումային պահանջարկի խթան՝ պայմանավորված ռազմական տեխնիկայի, սարքավորումների, ենթակառուցվածքների ձեռքբերմամբ: Ինչի ստուգման նպատակով կառուցված մոդելի համաձայն նշանակալիության 1% մակարդակում պաշտպանության ծախսերի 1 մլրդ. ՀՀ դրամ աճը 1 եռամսյակ հետո համախառն կուտակումը (ներդրումները) ավելացնում է 0.27 տոկոսով: Ըստ այդմ, մոդելը հաստատում է, որ նույնիսկ այնպիսի ոլորտը, որը հիմնականում դիտարկվում է որպես ոչ արտադրողական, կարող է ունենալ ներդրումները խթանող ազդեցություն՝ պայմանավորված տեխնոլոգիական պատվերներով, ռազմարդյունաբերության զարգացմամբ կամ ենթակառուցվածքային համալիրների ընդլայն-

մամբ: Այսպիսով, կարելի է արձանագրել, որ Հայաստանում պաշտպանական ծախսերը ունեն որոշակիորեն ներդրումները խթանող ազդեցություն, ուստի քաղաքականություն մշակողները պետք է վերագնահատեն դրա դերը՝ կենտրոնանալով այն բաղադրիչների վրա, որոնք խթանում են ներքին կապիտալի ձևավորումը, նորարարությունը և արդյունաբերական զարգացումը:

Սոցիալական պաշտպանության ծախսերը (նպաստներ, կենսաթոշակներ) գործում են որպես պահանջարկի խթաններ՝ մեծացնելով տնային տնտեսությունների սպառումը: Սակայն, Հայաստանի դեպքում դրանց ազդեցությունը հաճախ վիճարկելի է՝ պայմանավորված թիրախայնության ու բաշխման արդյունավետության խնդիրներով: Վերոնշյալ թեզը ստուգելու նպատակով կառուցված մոդելի արդյունքների համաձայն, սոցիալական պաշտպանության ծախսերի 1% աճի դեպքում վերջնական սպառումը ընթացիկ եռամսյակում կավելանան 0,05 տոկոսով, այլ հավասար պայմանների դեպքում: Վերջնական սպառման և սոցիալական պաշտպանության ծախսերի դրական կապը վկայում է, որ սոցիալական ոլորտում պետական ծախսերը բարձրացնում են տնային տնտեսությունների սպառման մակարդակը, ինչն իր հերթին խթանում է համախառն պահանջարկը և դրական ազդակ է հաղորդում տնտեսական աճին:

Տնտեսական հարաբերություններին ուղղվող ծախսերը ներառում են այնպիսի ծրագրեր, որոնք կարող են նպաստել գործարար միջավայրի բարելավմանը, արտահանման խթանմանը և արտաքին շուկաներ դուրս գալու հնարավորությունների ընդլայնմանը: Ըստ այդմ, կառուցված մոդելի համաձայն, տնտեսական հարաբերությունների վրա կատարվող ծախսերի 1 մլրդ. ՀՀ դրամ աճի դեպքում արտահանումը մեկ եռամսյակ հետո կավելանա 0.584 տոկոսով, իսկ երկու եռամսյակ հետո կավելանան 0.333 տոկոսով, այլ հավասար պայմանների դեպքում: Տնտեսական հարաբերությունների վրա կատարվող ծախսերը արտահանման վրա ունեն դրական, բայց փոքր ազդեցություն: Սա նշանակում է, որ տնտեսական աճը կարելի է խթանել տնտեսական հարաբերությունների ծախսերը նպատակային ուղղորդելով դեպի արտահանմանն ուղղված ծրագրերին, սակայն դրանց արդյունավետությունը մեծապես կախված է քաղաքականության շարունակականությունից, ծրագրերի կառուցվածքային ուղղվածությունից և մակրոտնտեսական միջավայրի կայունությունից: Միևնույն ժամանակ, բացի արտահանման խթանումից կարևորվում է նաև դրա դիվերսիֆիկացիան, ինչը նշանակում է նոր ապրանքների մշակում, նոր ապրանքների արտահանում և արտահանման ապրանքների արժեքի ավելացման շղթայի վերև բարձրացում [14, էջ 76]:

Այսպիսով, ծախսերի արդյունավետության համաթվի և էկոնոմետրիկ մոդելների համակցված կիրառումը հնարավորություն է տալիս մի կողմից

բացահայտել բյուջետային միջոցառումների ծախսերի և արդյունքների միջև անհամաչափությունները, մյուս կողմից քանակապես գնահատել պետական ծախսերի մակրոտնտեսական ազդեցությունները:

Եզրակացություն

Հետազոտության արդյունքները թույլ են տալիս կատարել հետևյալ եզրահանգումները.

1. Ծրագրային բյուջետավորման ներդրումը ձևավորել է ՀՀ պետական ծախսերի կառավարման նոր ինստիտուցիոնալ շրջանակ, որը հնարավորություն է տալիս բյուջետային ռեսուրսները կապել կոնկրետ նպատակների, արդյունքների և վերջնարդյունքների հետ: Սակայն, ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ծրագրային մոտեցման լիարժեք կիրառումը դեռևս սահմանափակված է ծրագրերի նպատակների, արդյունքային չափորոշիչների և պլանավորման որակի թերություններով:

2. Բազմազործոն ռեգրեսիայի և վեկտորական-ավտոռեգրեսիայի (VAR) մոդելների կիրառմամբ ստացված էմպիրիկ արդյունքները վկայում են, որ կարճաժամկետ ժամանակահատվածում ՀՀ տնտեսական աճը ավելի մեծ դրական ազդեցություն ունի բյուջետային ծախսերի աճի վրա, քան՝ բյուջետային ծախսերի աճի ազդեցությունն է ՀՀ տնտեսական աճի վրա: Միաժամանակ, կարճաժամկետում ՀՀ տնտեսական աճի խթանման հարցում պետական բյուջեի ընթացիկ ծախսերի ազդեցությունն ավելի մեծ է, քան կապիտալ ծախսերինը:

3. Իրականացված բազմազործոն ռեգրեսիոն վերլուծությունը հաստատում է, որ բյուջետային ծախսերի ազդեցությունը տնտեսական աճի վրա միատեսակ չէ և էականորեն պայմանավորված է ծախսերի կառուցվածքով և ուղղվածությամբ: Պաշտպանության ծախսերը ՀՀ-ում կարող են ունենալ կարճաժամկետ ներդրումային բնույթի ազդեցություն: Սոցիալական պաշտպանության ծախսերը ցուցաբերում են դրական, սակայն սահմանափակ ազդեցություն վերջնական սպառման վրա, ինչը վկայում է դրանց պահանջարկածին բնույթի մասին, բայց միաժամանակ մատնանշում է արդյունավետության խնդիրները: Տնտեսական հարաբերությունների վրա կատարվող ծախսերը դրական ազդեցություն ունեն արտահանման վրա, սակայն այդ ազդեցության չափը ևս համեմատաբար փոքր է և զգայուն՝ մակրոտնտեսական միջավայրի և քաղաքականության շարունակականության նկատմամբ:

4. Առաջարկված բյուջետային ծախսերի արդյունավետության գնահատման համաթիվը հնարավորություն է տալիս լրացնել ծրագրային բյուջետավորման գնահատման առկա բացը՝ սպահովելով ծրագրերի և միջոցառումների արագ և համադրելի գնահատում: Միևնույն ժամանակ, այն կարող է հանդես գալ որպես նախնական գտման արդյունավետ մեխանիզմ՝ թույլ տալով սահմանափակ ռեսուրսներով կենտրոնանալ առավել ցածր արդյունավետություն ունեցող ծրագրերի

վրա: Համաթվի կիրառման արդյունքները ցույց են տալիս, որ միջոցառումների մի զգալի մասի դեպքում առկա է ոչ ֆինանսական և ֆինանսական ցուցանիշների կատարողականի անհամապատասխանություն, ինչը վկայում է ինչպես պլանավորման, այնպես էլ իրականացման փուլերում առկա համակարգային խնդիրների մասին:

5. Հետազոտության արդյունքները փաստում են, որ ծրագրային բյուջետավորման արդյունավետությունը չի կարող ապահովել բացառապես ձևական ինստիտուցիոնալ փոփոխություններով: Անհրաժեշտ է գնահատման մեխանիզմների խորացում, արդյունքային և վերջնարդյունքի չափորոշիչների որակական բարելավում, ինչպես նաև ծրագրերի և մակրոտնտեսական նպատակների միջև կապի հստակեցում: Առանց այս բաղադրիչների ծրագրային բյուջետավորումը չի կարող լիարժեք կատարել պետական ծախսերի արդյունավետության բարձրացման իր հիմնական գործառնությունը:

Օգտագործված գրականության ցանկ

1. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, ՀՕ 137, Երևան, ընդ. 24.06.1997 թ.
2. ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնական կայքէջ, վիճակագրություն և հաշվետվություններ բաժին, հաշվետվություններ ենթաբաժին, ՀՀ պետական բյուջեի կատարման մասին հաշվետվություններ, 2019-2024 թթ., https://minfin.am/hy/page/hy_hashvetvutyunner
3. ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թ. հունիսի 23-ի «Հայաստանի Հանրապետությունում ծրագրային բյուջետավորման համակարգի ամբողջական ներդրման ռազմավարության շրջանակներում մեթոդական ուղեցույցները հաստատելու մասին» N 311-Ա հրաման, https://minfin.am/hy/page/byujetayin_ev_gandzapetakan_hamakarg/
4. Հարությունյան Ա., Սիրունյան Վ. (2022). Չարգացման քաղաքականությունների և բյուջետային ծրագրերի քարտեզագրման և կապերի ուսումնասիրություն, https://minfin.am/hy/page/petakan_byui/
5. **Robinson, M.** (2007). Performance Budgeting: Linking Funding and Results. Palgrave Macmillan. <https://link.springer.com/book/10.1057/9781137001528>
6. **Robinson, M., & Brumby, J.** (2005). Does Performance Budgeting Work? An Analytical Review of the Empirical Literature. IMF Working Paper No. 05/210, p 13,

- <https://www.imf.org/external/pubs/ft/wp/2005/wp05210.pdf>
7. **Lixiang Chen** (2021). The Impact of Performance Budgeting on Defense Resource Allocation. International Journal of Economic Behavior and Organization, Volume 9, Issue 4, <http://www.sciencepublishinggroup.com/i/ijebo>
8. **Dimitriou, D., Goulas, E., & Kallandranis C.** (2025). Spend on what? Insights on military spending efficiency, European Journal of Political Economy, Volume 88, <https://www.sciencedirect.com/journal/european-journal-of-political-economy>
9. **Abbasov, R.** (2025). The Effectiveness of Performance-Based Budgeting in the Public Sector: An Empirical Analysis and Policy Implications. iBusiness, 17, 56-76. doi: 10.4236/ib.2025.171003, <https://www.scirp.org/journal/ib/>
10. Ծրագրային բյուջետավորման պրակտիկայի ներդրումը ՀՀ արդարադատության նախարարությունում (2019-2020 թթ.), <https://transparency.am/hy/publication/pdf/208/1308>
11. **Dale, E., Kyurumyan, A., Kharazyan, S., Barroy, H.,** (2018). Budget Structure Reforms and Transition to Programme Budgeting in Health: Lessons from Armenia, Health Financing Case Study No 12 Budgeting in Health, WHO Switzerland
12. **Grigoryan, K. H., Chapanyan, T. S.** (2025). Budgetary Reforms and Improvement of Budget Expenditure Management in Armenia Under the Framework of Sustainable Development Goals. In: Popkova, E.G. (eds) Technological Horizons of Decarbonization Based on Environmental Innovations. Advances in Science, Technology & Innovation. Springer, Cham. pp. 365–371. https://doi.org/10.1007/978-3-031-82210-0_60
13. **Grigoryan, K., Arpanahi, A.** (2025). Perspectives of Armenian-Iranian Economic Relations within the BRI, Armenia and the Belt and Road Initiative: Perspectives from Europe, the Caucasus, and Central Asia, 1st edition, Taylor & Francis Group/Routledge, Chapter 8, pp. 116-128, <https://doi.org/10.4324/9781003501459>
14. Grigoryan, K. (2012). Study of the Peculiarities of Export Developments in EU Member Countries and in Armenia, Romanian Journal of European Affairs, Vol. 12, No. 3, pp.65-82. <https://ssrn.com/abstract=2142370>, <http://dx.doi.org/10.2139/ssrn.2142370>

Շճան/Հանձնվել է՝ 19.01.2026
 Рецензирована/Գրախոսվել է՝ 26.01.2026
 Принята/Ընդունվել է՝ 02.02.2026